ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի Տնտեսական հարաբերություններ բնագավառի ծախսերի վերաբերյալ









2019 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 1 տրիլիոն 629.4 մլրդ դրամ, ինչը կազմում է 2019 թվականի ճշտված պլանի 92.4 %-ը, ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշի 101.5 %-ը և գերազանցում է 2018 թվականի մակարդակը 12.6 %-ով կամ 182.3 մլրդ դրամով: Ընդ որում, բյուջետային ծախսերի 6.9 %-ը կամ 111.9 մլրդ դրամը տրամադրվել է տնտեսական հարաբերություններին: Վերջինս կազմել է տարեկան ճշտված ծրագրի 71.3 %-ը:

Տնտեսական հարաբերություններ բնագավառի ծախսերը 2019 թվականին կազմել են ՀՆԱ-ի 1.71 %-ը, որը շուրջ 0.05 %-ային կետով գերազանցում է պետական բյուջեով հաստատված ցուցանիշին, իսկ 2017 թվականի և 2018 թվականի ցուցանիշներին զիջում է համապատասխանաբար՝ 0.6 և 0.2 %-ային կետերով:

2019 թվականին պետական բյուջեի «Տնտեսական հարաբերություններ» բաժնին տրամադրվել է 111.9 մլրդ դրամ, որը կազմում է բյուջետային ծախսերի 6.9 %-ը՝ պետական բյուջեով հաստատված 8.1 %-ի դիմաց: Վերոնշյալ 6.9 % մակարդակը զիջում է 2017 թվականի մակարդակին՝ 1.7 %-ային կետով իսկ 2018 թվականի ցուցանիշին՝ 0.8 %-ային կետով:

Տնտեսական հարաբերություններ/ՀՆԱ ցուցանիշը 2019 թվականին կազմել է 6.9 %, ինչն ի տարբերություն 2018 թվականի նվազել է 0.8 %-ային կետով, իսկ 2017 թվականի ցուցանիշին՝ 1.7 %-ային կետով:

2019 թվականին տնտեսական հարաբերություններ բնագավառի ծախսերի կեսից ավելին՝ 55.4 %-ը բաժին է ընկել տրանսպորտին, այդ ուղղությամբ տրամադրվել է 62.0 մլրդ դրամ, ինչը 2018 թվականի մակարդակից ավել է 4.9 %-ով, սակայն 2017 թվականի համապատասխան ցուցանիշին զիջում է 13.6 %-ով: Ճշտված ծրագրի նկատմամբ կատարողականը կազմել է 74.7 %:

2019 թվականին տնտեսական հարաբերությունների բնագավառի ծախսերի՝ 28.5%-ը կամ 31.9 մլրդ դրամ տրամադրվել է «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն» խմբին: Այն կազմել է ճշտված պլանի 77.9 %-ը: Ընդ որում 2018 թվականի մակարդակը գերազանցել է 20.6 %-ով, սակայն 2017 թվականի համապատասխան ցուցանիշին զիջել է 15.8 %-ով:

«Վառելիք և էներգետիկա» խմբի ծախսերը 2019 թվականին կազմել են շուրջ 6.0 մլրդ դրամ, որն ապահովել է ճշտված պլանի կատարողականի 39.7 %-ը: Ընդ որում, 2017 թվականի և 2018 թվականի համեմատությամբ կատարված ծախսերը նվազել են համապատասխանաբար՝ 41.7 %-ով և 63.7 %-ով:

Պետական բյուջեի «Միջուկային վառելիք» դասով 2019 թվականին կատարված ծախսերը կազմել են 321.6 մլն դրամ, ինչն ապահովել է ճշտված պլանի 98.3%-ը: 2019 թվականի ծախսերը՝ 2017 թվականի և 2018 թվականի համեմատությամբ ավելացել են համապատասխանաբար՝ 18.3%-ով և 17.0 %-ով:

Վառելիքի այլ տեսակների գծով 2019 թվականի պետական բյուջեով հատկացվել է շուրջ 1.8 մլրդ դրամ, ինչը կազմել է վառելիքի և էներգետիկայի ծախսերի կառուցվածքի 29.4 %-ը : Այս դեպքում, ճշտված պլանի կատարողականը ապահովվել է 30.3 %-ով: Ընդ որում 2017 թվականի և 2018 թվականի համեմատությամբ ծախսերը նվազել են համապատասխանաբար՝ 51.0 և 38.6 %-ով:

Էլեկտրաէներգիայի ծախսերի նպատակով 2019 թվականին պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 3.9 մլրդ դրամ, ինչը 2017 թվականի համեմատությամբ պակաս է շուրջ 39.0 %-ով, իսկ 2018թվականի համեմատությամբ՝ 70.1 %-ով: Էլեկտրաէներգիայի գծով ճշտված պլանի կատարողականը 2019 թվականին կազմել է 47.3 %: «Վառելիք և էներգետիկա» խմբի ծախսերի կառուցվածքում, առյուծի բաժինը զբաղեցրել են Էլեկտրաէներգիայի ծախսերը, կազմելով 65.2 %:

2019 թվականի պետական բյուջեի տնտեսական հարաբերությունների բնագավառի ծախսերի կառուցվածքում «Լեռնաարդյունահանում, արդյունաբերություն և շինարարություն» խմբի ծախսերը կազմել են 0.02 % կամ շուրջ 17.5 մլն դրամ: Ճշտված պլանի կատարողականը կազմել է 47.3 %: Ընդ որում, 2017թվականի և 2018 թվականի համեմատությամբ հատկացվող միջոցները նվազել են, համապատասխանաբար՝ շուրջ 15.1 %-ով և 52.7 %-ով:

ԱԺԲԳ







«Հանքային ռեսուրսների արդյունահանում, բացառությամբ բնական վառելիքի» դասով պետական բյուջեից հատկացված միջոցները 2019 թվականին կազմել են շուրջ 14.2 մլն դրամ: Ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 83.7 %: Նախորդող՝ 2017 թվականի և 2018 թվականի համեմատությամբ տրամադրվող միջոցների ծավալները երկուստեք նվազել են, 2017 թվականի նկատմամբ 31.1 %-ով և 2018 թվականի նկատմամբ 16.3 %-ով:

Պետական բյուջեի «Շինարարություն» դասով կատարված ծախսերը 2019 թվականին կազմել են 3.3 մլն դրամ: Ճշտված պլանի նկատմամբ կատարողականն ապահովվել է 16.5 %-ով: Շինարարության գծով ծախսերը, 2018 թվականի համեմատությամբ նվազել են շուրջ 83.5 %-ով:

Պետական բյուջեի «Կապ» խմբի ծախսերի գծով 2019 թվականին հատկացվել է շուրջ 289.5 մլն դրամ, կամ տնտեսական հարաբերությունների բնագավառի ծախսերի 0.3 %-ը: Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 99.7 %: 2017 թվականի համեմատությամբ ծախսերը նվազել են 6.6 %-ով, իսկ 2018 թվականի ցուցանիշի համեմատ պակաս է 0.3 %-ով:

2019 թվականի պետական բյուջեով տնտեսական հարաբերությունների բնագավառի «Տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ» խմբին հատկացվել է շուրջ 212.2 մլն դրամ: 2017-2018 թվականների համեմատությամբ արձանագրվել է էական բարելավում: Մասնավորապես, 2017 թվականի համեմատ ծախսերն ավելացել են 134.7 մլն դրամով, կամ 173.9 %-ով, իսկ 2018 թվականի համեմատ՝ շուրջ 173.6 մլն դրամով, կամ 450.5 %-ով: Ճշտված պլանի նկատմամբ կատարողականը ապահովվել է 100 %-ով:

«Տնտեսական հարաբերություններ (այլ դասերի չպատկանող)» խմբի ծախսերի գծով, 2019 թվականի պետական բյուջեից հատկացվել է 7.1 մլրդ դրամ: Նշված խմբի ծախսերը, կազմել են պետական բյուջեի տնտեսական հարաբերությունների բնագավառի ծախսերի 6.4 %-ը, ապահովելով՝ ճշտված պլանի 58.7 % կատարողական: Հատկանշական է, որ 2017 և 2018 թվականների համեմատ 2019 թվականի ծախսերի ծավալներն էապես բարելավվել են: Մասնավորապես, 2017 թվականի համեմատ՝ շուրջ 2.0 մլրդ դրամով, իսկ 2018 թվականի համեմատ գրեթե 2.0 մլրդ դրամով:

2019 թվականի պետական բյուջեի «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն» խմբի ծախսերի փաստացի ցուցանիշը կազմել է ՀՆԱ-ի 0.49 %-ը, ինչը պետական բյուջեում հաստատված ցուցանիշին գերազանցել է 0.03 %-ային կետով: Ընդ որում, 2018 թվականի համեմատությամբ վերոնշյալ ցուցանիշը բարելավվել է 0.1 %-ային կետով, իսկ 2017 թվականի ցուցանիշին զիջել՝ շուրջ 0.2 %-ային կետով:

ԱԺԲԳ







2019 թվականի պետական բյուջեի «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն» խմբի ծախսերի 25.4 %-ը կամ 8.1 մլրդ դրամը տրամադրվել է «Գյուղատնտեսություն» դասի գծով ծախսերին: Նշված ուղղությամբ 2017 թվականի համեմատությամբ ծախսերը նվազել են 23 %-ով, իսկ 2018 թվականի համեմատությամբ 15.4 %-ով: Ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 64.0 %-ով:

«Անտառային տնտեսություն» դասով կատարված ծախսերը 2019 թվականին կազմել են 1.6 մլրդ դրամ, կամ ճշտված պլանի 87.3 %-ը: Նախորդող՝ 2017 և 2018 թվականների համեմատությամբ ծախսերը ավելացել են համապատասխանաբար՝ 28.4 և 201.5 %-ով:

Պետական բյուջեից, 2019 թվականին «Ոռոգում» դասով տրամադրվել է 22,2 մլրդ դրամ, որը կազմել է ճշտված պլանի 83.9 %-ը: 2017 թվականի համեմատությամբ ծախսերը նվազել են շուրջ 15.0 %-ով, իսկ 2018 թվականին ավելացել՝ 35.8 %-ով:

Տրանսպորտի բնագավառի բյուջետային ծախսերը 2019 թվականին կազմել են ՀՆԱ-ի 1.0 %-ը, որը շուրջ 0.08 %-ային կետով գերազանցում է պետական բյուջեով հաստատված ցուցանիշը, ինչպես նաև 0.02 %-ային կետով գերազանցում է 2018 թվականի համապատասխան ցուցանիշը, իսկ 2017 թվականի մակարդակին զիջում է 0.3 %-ային կետով:

Պետական բյուջեի «Տրանսպորտ» խմբի բյուջետային ծախսերը 2019 թվականին կազմել են շուրջ 62.0 մլրդ դրամ, որը ապահովել է բյուջետային ծախսերի 4.0 %-ը: Ընդ որում, նշված ցուցանիշը 0.2 %-ային կետով գերազանցում է բյուջեում հաստատված ցուցանիշը, իսկ 2017 և 2018 թվականների մակարդակներին զիջում է համապատասխանաբար՝ 0.8 %-ային և 0.1 %-ային կետերով:

«Տրանսպորտ» խմբի բյուջետային ծախսերի առյուծի բաժինը՝ շուրջ 57.0 մլրդ դրամ կամ 91.8 %-ն ուղղվել է «Ճանապարհային տրանսպորտ» դասով կատարված ծախսերին: Այս դեպքում, ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 75.6 %: Ընդ որում, կատարված ծախսերը 2017 թվականի համեմատությամբ նվազել են շուրջ 15.5 %-ով, իսկ 2018 թվականի համեմատությամբ բարելավվել՝ 5.3 %-ով:

Երկաթուղային տրանսպորտի գծով կատարված ծախսերը 2019 թվականին կազմել են 383.8 մլն դրամ: Այս դեպքում ճշտված պլանի նկատմամբ կատարողականը ապահովվել է 98.0 %-ով: Նախորդող՝ 2017 և 2018 թվականների համեմատությամբ ծախսերի ծավալները որոշակիորեն ավելացել են, մասնավորապես 2017 թվականին՝ շուրջ 20.3 %-ային կետով և 2018 թվականին՝ 7.5 %-ային կետով:

ԱԺԲԳ





2019 թվականին, պետական բյուջեի «Օդային տրանսպորտ» դասի ծախսերի կատարողականը «Տրանսպորտ» խմբի ծախսերի կառուցվածքում կազմել է 1.7 %, կամ շուրջ 1.0 մլրդ դրամ: Այդուհանդերձ, 2017 թվականի ծախսերի համեմատությամբ, 2019 թվականին առկա է բարելավում՝ 58.6 %-ային կետով, իսկ 2018 թվականին՝ նվազում 1.0 %-ով:

«Տրանսպորտ» խմբի ծախսերի կառուցվածքում՝ «Խողովակաշարային և այլ տրանսպորտ» դասով հատկացված միջոցները 2019 թվականին կազմել են 3.6 մլրդ դրամ, կամ վերոնշյալ խմբի ծախսերի շուրջ 5.8 %-ը: Նախորդող տարիների համեմատությամբ առկա են որոշակի բարելավումներ: Մասնավորապես, 2017 թվականի համեմատությամբ ծախսերն ավելացել են շուրջ 251.6 մլն դրամով իսկ 2018 թվականի համեմատ 21.6 մլն դրամով: Ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 62.7 %: